«ՄԵԾ» ԵՎ «ՓՈՔՐ» ՍՂՆԱԽՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԶԱՎԵՆ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

XVIII դ. 20-ական թվականների հայ ազատագրական շարժման մեջ խոշոր դեր էին խաղում Ղարաբաղի հինգ մելիքություններում տեղակայված սղնախները։ Եվ պատահական չէ, որ տվյալ ժամանակաշրջանի ազատագրական շարժման պատմությամբ զբաղվող գրեթե բոլոր հետազոտողներն այս կամ այն չափով անդրադարձել են նաև սղնախների խաղացած դերին։ Սղնախների առաջացման ռազմաքաղաքական նախադրյալների, ժամանակի, տեղակայման, տակտիկա-ստրատեգիական նշանակության, քաղաքական դերի, կառուցվածքի և նման այլ հարցերի լուսաբանմամբ ձեռք բերված նվաճումները կոչված են լրացնելու այդ ժամանակահատվածի հերոսամարտերի իրական պատկերը։ Այս առումով շատ բան է արված սովետահայ պատմագիտության մեջ։ Սակայն դա չի նշանակում, թե պրոբլեմի բոլոր հարցերը լուծված են։ Որոշ հարցեր պարզաբանման խիստ կարիք են զգում։ Հնարավոր չէ, օրինակ, շրջանցել պատմագիտության մեջ առ այսօր քաղաքացիություն վայելող տեսակետն այսպես կոչված «Մեծ» և «Փոքր» սղնախների մասին։ Համաձայն այդ տեսակետի, նշված ժամանակաշրջանի ազատագրական պայքարի ընթացքում գոյություն են ունեցել այդպիսի ռազմաքաղաքական կենտրոններ, որտեղ և տեղակայված էին Ղարաբաղի հիմնական ռազմական ուժերը։ Այս կարծիքի իրական լինելու նկատմամբ հավատն այնքան խորն է եղել, որ հետազոտողները «Մեծ» և «Փոքր» անվանումներով ու ռազմաքաղաքական ընդունված նշանակությամբ այդ երկու կենտրոնների գոյության հարցը համարելով ինքնին փաստ, այդ պրոբլեմի շուրջ գիտական պրոպոզիցիաները տարել են դրանց տեղակայումը և նշանակությունը բացահայտելու ուղղությամբ։ Եվ, այս բնագավառում, ինչպես և պետք էր սպասել, այնքան հակասական են եղել վավերագրերի տվյալները, որ «հայտնի դժվարություններ»[1] են ստեղծվել հետազոտողների ճանապարհին ու պատճառ դարձել իրարամերժ եզրակացություններ։ Այսպես, ըստ Լեոյի «Մեծ» սղնախը տեղակայվել է Մոռավ լեռան փեշերին, իսկ «Փոքրը» (այն էլ «ամենայն հավանականությամբ») Քիրս լեռան շրջակայքում[2]։ Ուսումնասիրողների հետագա սերունդը, հենվելով նորահայտ վավերագրերի տեղեկությունների վրա, հակվել է դրանցից «Մեծը» զետեղել Քիրսի շրջակայքում[3],

---

[1] А. Г. Иоаннисян, Историческое введение к сборнику «Армяно-русские отношения в XVIII веке», т. II, ч. I, Ереван, 1964, с. XL.

[2] Հայերը «...երեք գլխավոր բանակատեղի ունեին, որոնցից առաջինը, որ կոչվում էր Մեծ Սղնախ, գտնվում էր Մոռավ լեռներում, Թարթառ գետի վրա, երկրորդը՝ Փոքր Սղնախ անունով, գտնվում էր, ամենայն հավանականությամբ, Վարանդա գավառի Քիրս լեռներում... Փոքր Սղնախի գլխավոր հրամանատարն էր Ավան Յուզբաշին...» (Լեո, Հայոց պատմություն, հ. 3, գիրք 2, Երևան, 1973, էջ 140)։ «Եվ այստեղ (Ջրաբերդի գավառում—Զ. Ա.) Դաղստանի գիշատիչները տեսան իրանց առաջ Վախթանգ թագավորի անդրանիկ հիմնարկությունը—հայ մեծաքանակ զորքերի առաջին կամ Մեծ կոչված Սղնախը Մոռավ սարի վրա... Բացի Մոռավի Մեծ Սղնախից կազմակերպվում էր և Փոքր Սղնախ՝ Քիրսի լեռնաշխարհում, Շուշի քաղաքին մոտ։ Այս մի ինքնագլուխ բանակ չէր, այլ կազմում էր Մեծ Սղնախի բաժանմունքը...» (Լեո, Խաչատրյան կապիտալ, Երևան, 1934, էջ 277—283)։ Նույն կարծիքը տեղ է գտել նաև բուհական դասագրքերում. «Հայկական զորքի խոշոր ջոկատներ առաջին հերթին կազմակերպվեցին պատմական Արցախում, այսինքն Ղարաբաղում, Մոռավ լեռան շրջակայքում, այդ վայրը անվանվեց Մեծ Սղնախ... մյուս զորակայանը Փոքր Սղնախն էր՝ Շուշի քաղաքի մոտերքում» («Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1974, էջ 673, «Հայ ժողովրդի պատմություն», հ. 2, Երևան, 1965, էջ 277)։

[3] Ա. Հովհաննիսյանը գրել է. «Դիզակի զորապետ Թարխան յուզբաշու ամրության վրա Ջրաբերդի զորապետներ Աբրահամի և Սարդի հարձակման մասին մեզ հասած գրության մեջ պարզորոշ ասվում է, որ նրանք «եկէլ ան քշերն զոշունով մեծ սղնաղն կողել ան»։ Այս գրա-

պրանով իսկ ակամայից առաջ բերելով կասկածանք՝ հարցի տիրապետող դրվածքի նկատմամբ։ Այս վերջին հանգամանքն էլ ստիպում է դարձնում նորից անդրադառնալու սղնախների վերաբերյալ հին ու նորահայտ վավերագրերի առավել մանրակրկիտ վերլուծությանը։

Այդ ուղղությամբ մեր կատարած պրպտումներից պարզվել է, որ ոչ մի վավերագրում հաստատի տեղեկություն չկա, թե նշված ժամանակաշրջանի ազատագրական շարժման ընթացքում, իրոք, Ղարաբաղի զինական ուժերի մեծ մասը կենտրոնացված էր «Մեծ» սղնախ կոչված ռազմաքաղաքական առանձին մի կենտրոնում, իսկ մյուս, փոքր մասը՝ «Փոքր» սղնախ կենտրոնում։ Այսինքն, ոչ մի վավերագրում չի հիշատակվում նման սղնախների գոյության փաստը, որով նաև իմաստից գրկվում է այդ սղնախների տեղակայման շուրջ պրպտումներ կատարելու անհրաժեշտությունը, հարցի վերոհիշյալ դրվածքը դարձնելով, իրոք, թյուրիմացություն։

Փորձենք վեր հանել այդ թյուրիմացության պատճառները։

Մեր կարծիքով հարցի նման դրվածքի հիմնական «մեղավորն» է «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէկին» սկզբնաղբյուրը, որից էլ օգտվել է Լեոն։ Այդ սկզբնաղբյուրի հեղինակը խոսելով Ղարաբաղի հայերի ազատագրական պայքարի մասին, օգտագործել է «Մեծ սղնախ» արտահայտությունը, բայց ոչ թե որևէ ռազմաքաղաքական հենակետի հզորության չափանիշը շեշտելու նպատակով (մի հանգամանք, որը վրիպել է հետազոտողների ուշադրությունից)։ Եվ տես, Լեոն այդ արտահայտությունը փոխանցելով իր «Պատմության» մեջ, քաղաքացիություն է տվել դրան՝ հենց ռազմաքաղաքական հենակետի հզորության չափանիշ արտահայտող բովանդակությամբ։ Դա ժառանգվել է հետագա ուսումնասիրողների կողմից ու այդպես էլ մտել գիտական գործածության մեջ։ Բայց ահա թե ինչպես է գրված գա այդ սկզբնաղբյուրում. «Եւ դամ թէ զիա՞րդ զայսչափ լարիս տեսեալ Հայոց բնակչացն Գուգարացւոց, և որք շուրջ էին բնակիչք Հայոց, դինու զարդու յորինեցան, ի մարտ պատրաստեցան միահամուռ ճակատեալք

թյունից պարզվում է, որ գրության մեջ հիշատակված Ջրաբերդի և Գյուլիստանի զորապետների սղնախներն անմիջապես կարող էին մտնել միայն Փոքր սղնախի սահմանների մեջ... Համենայն դեպս հիմքեր չկան կասկածելու, որ Մեծ սղնախի գլուխ կանգնած էր Ավան յուզբաշին՝ Շոշ սղնախի զորահրամանատարը, որը հետագայում դարձավ ամբողջ շարժման գլխավոր շտաբը... Եթե մինչև 1724 թ. կեսերը Մեծ և Փոքր սղնախների անվան տակ հասկացվում էին մեկը մյուսից տարբեր և հաճախ մեկը մյուսի դեմ հակոտնյա Ղարաբաղի սղնախների միություններ, ապա հետագայում, թուրքերի դեմ Ղարաբաղի հայերի պայքարի մաքսիմալ լարվածության պահին տեղի ունեցան բոլոր, կամ համարյա բոլոր սղնախների մարտական ուժերի միավորում զորահրամանատար Ավան-յուզբաշու ընդհանուր հրամանատարության տակ։ Ահա թե ինչու այդ ժամանակաշրջանում մեր վավերագրերում լրիվ անհետանում է Մեծ և Փոքր սղնախների մասին հիշատակությունը և հանդես է գալիս «Սղնախ» կամ «Սաղնախ» ընդհանրական անվանումը» (Ա. Գ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ XL)։ Ինչպես տեսնում ենք, ակադ. Ա. Հովհաննիսյանը ևս ընդունում է «Մեծ» և «Փոքր» սղնախների գոյությունը, բայց այն տարբերությամբ, որ Շոշն է համարում «Մեծը», իսկ Գյուլիստանի և Ջրաբերդի սղնախները՝ «Փոքրը»։ Բացի այդ, նա հակված է կարծելու, որ Ղարաբաղի ռազմաքաղաքական ուժերի նման երկրորդված վիճակը տևել է մինչև 1724 թ. կեսերը, երբ այդ ուժերը համախմբվել են մեկ ընդհանուր հրամանատարի՝ Ավան յուզբաշու, ղեկավարության տակ։ Այդուհանդերձ նա ընդունում է նաև, որ դրանց զուգահեռ կային նաև այլ սղնախներ։

Գ. Հարությունյանը գրում է հետևյալը. «Եթե Ջրաբերդի և Գյուլիստանի օկրուգները միավորվելով կազմել էին մեկ սղնախ, ապա Վարանդայի օկրուգն այդ ժամանակաշրջանում ըստ երևույթին բաժանված էր երկու իրար նկատմամբ թշնամաբար տրամադրված մասերի, որոնք ստեղծել էին երկու ինքնուրույն սղնախներ։ Այդ սղնախներից մեկը միավորվելով Խաչեն-Դանձասարի հետ՝ նրա հետ միասին ստեղծեց ավելի խոշոր սղնախ (ըստ երևույթին այդ սղնախն էլ պետք է համարել «մեծ սղնախը»), (П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, с. 226; հմմտ. Ա. Գ. Արրահամյան, Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953, էջ 33)։ Ինչպես տեսնում ենք, նորագույն հետազոտողների տեսակետները չնայած հակասում են Լեոյի կարծիքին, այդուհանդերձ, նրանցում ևս բացակայում է միօրինակությունը։

առ Թառթառ գետովն ընդդէմ ամենայն արձակելոցն ի յասպատակութիւն երկրի իւրեանց (որք և գտանուն առին այսու, և կոչեցան մինչև ցայսօր մեծ Սղնախ)»[4]։

Ինչպես երևում է, «Ընտիր պատմության» հեղինակն այս պարբերության մեջ միայն արձանագրել է Ղարաբաղում կատարված դեպքերի մասին իր լսածը։ Նա նշում է միայն, որ Ղարաբաղի հայերը «առ Թառթառ գետովն» շրջանում դիմադրություն են կազմակերպել թշնամիների դեմ, ստեղծել են սղնախ, որը հայտնի է «Մեծ սղնախ» անվամբ։ Սակայն այս հաղորդումից չի երևում, թե այդ սղնախն ինչո՞ւ է կոչվում «Մեծ»։ Նա լսել է միայն, որ այդ շրջանի ժողովրդի ստեղծած ամրությունը հենց այդպես էլ կոչվում է՝ «Մեծ սղնախ», իսկ թե իրականում այն մեծ է, թե՞ փոքր՝ նրան հայտնի չէ։ Այս հաղորդումից պարզվում է, որ Ղարաբաղի ազատագրական պայքարի շրջանից նրան հայտնի էր միայն այս սղնախը. եթե դա այդպես է, ապա նա ի՞նչ իմանար՝ այն մե՞ծ է, թե՞ փոքր, ինչի՞ հետ պիտի համեմատեր, երբ մի այլ ուրիշը չգիտեր։ Ուրեմն, այստեղից կարելի է եզրակացնել, որ այդ սղնախն այդպես կոչվել էր, իրոք, ոչ թե ունեցած ռազմաքաղաքական առավելության պատճառով, այլ շնորհիվ այն տեղանքի անվան, որտեղ այն ստեղծվել է։ Այդ սկզբունքով էին կոչվում մյուս բոլոր սղնախները (Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի (Քարագլուխ), Շոշի, Կոչիզ-Ավետարանոցի, Տողի, Մեղրիի, Հալիձորի և այլն)։ Ղափանի ազատագրական պայքարի մասնակիցները՝ «Ընտիր պատմության» թելադրողները, անշուշտ, գիտեին, որ նշված ժամանակաշրջանում Գյուլիստանի և Ջրաբերդի մահալների Թառթառ գետի ավազանն ընդգրկող տարածքի մեծ մասի պատմական անվանումը հենց այդպես էլ էր՝ «Մեծ կողմանք»[5]։ Նրանք պարզապես հավաստել են Ղարաբաղի «Մեծ կողմանք» շրջանում սղնախ ստեղծվելու փաստը և թելադրել ոչ թե «Մեծ կողմանքի սղնախ» ոչ այնքան հարմար անվանումը, այլ ավելի կարճառոտ «Մեծ սղնախ» ձևը[6]։ Հենց այս իրողության հաշվի չառնելն է հիմք ծառայել հիշյալ շփոթության համար։

Առավել չափով հավաստի չէ այսպես կոչված «Փոքր» սղնախի գոյության հարցը։ «Փոքրը» պարզապես Լեոյի ենթադրության արդյունքն է (մի բան, որը չի ժխտում նաև ինքը)։ Լեոն համոզված էր «Մեծ» սղնախի գոյության մեջ, որը նրան ենթադրել է տվել «Փոքր» սղնախի առկայությունը։ Հետազոտողները, իրողություն ընդունելով «Մեծ» և «Փոքր» սղնախների գոյությունը, փորձեցին վերանայել դրանց տեղակայման հարցը, դրանով սկիզբ դնելով մի նոր շփոթության։ Դրան առիթ ծառայեցին սղնախներում գտնվող ռուսական պաշտոնական պատվիրակ Իվան Կարապետի՝ ռուսական արքունիք հղած երկու զեկուցագրերը, որոնցից մեկը նա կազմել է 1724 թ. փետրվարի 2-ին, իսկ մյուսը՝ նույն թվականի հուլիսին[7]։

Իր առաջին զեկուցագրում նա նշում է, որ Բաքվից դուրս գնալուց հետո «Թ (9) օրում խասայ խայէրին Պզտիկ Սղնախն, և տեղէն գնացի Մեծ Սղնախն, և տեղէն գնացի Գանձայսար մեծ պատրիարգին մանաստէրն[8], Եսայի կաթողիկոսին կոշտն։ Ոքազն կարդացին, թագաւորին հրամանին հնազանդեցան»։ Զեկուցագիրը գրվել է Շոշ սղնախում։

Մյուս վավերագիրը պատվիրակը գրել է այն բանից հետո, երբ նույն թվականի ապրիլին Ավան յուզբաշու գլխավորությամբ և իր մասնակցությամբ Ղարաբաղի հայկական զորքը օգնության էր գնացել Ղափանի ապստամբներին ու հետո վերադարձել. «Եւ մեք Ղափանայ եկինք, տեսինք, որ Եսայէ ախբէր Աբրայամն և Սարգիսն եկէլ ան քշերն զօշունով[9] մեծ սղնախն կո-

---

4 «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին, եւ պատերազմաց հայոցն Խափանու որք եղեն ընդ դէմ Թուրքաց ի մեր ումն ժամանակի, այն է յամի Տեառն 1722, եւ հայոց 1171», ի Վաղարշապատ, 1871, էջ 2։

5 «Գավառս զանազան ժամանակներում կոչված է Մեծ-Կողմանք, Մեծ-կուանք» իգիրմիդորդ (յուր 24 գյուղերի անունով (Թալիշ) համանուն գյուղի անվամբ այժմ Կյուլստան) Նույնանուն գյուղի անվամբ)»,— գրում է Մ. Բարխուտարյանցը («Պատմություն աղվանից», հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 48)։

6 Ավելորդ չէ նշել, որ բացի «Ընտիր պատմության» վերոբերյալ վկայությունից, ազատագրական կռիվներին նվիրված և ոչ մի վավերագրում նշում չկա այն մասին, որ այս սղնախը կոչվում էր «Մեծ»։ Բոլոր վավերագրերում այս շրջանի սղնախներն անվանվում են «Ջրաբերդի» և «Գյուլիստանի» ձևով, իրականին համապատասխան։ Հավանաբար, վերոհիշյալ թելադրողներին հայտնի չէր այս մանրամասնությունը կամ նպատակահարմար էին գտել սղնախներն անվանել դրանք ընդգրկող տարածքի անվանը համապատասխան։

7 Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., վավ. № 14, 50։

8 «Մանաստէր» («монастырь»)—վանք։

9 Այդ մասին մանրամասն տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., վավ. № 52։

խել ան և Թարխան ուղբաշին բռնել ան և շիրվանըցոնց տնէրն Թալանել ան և մեր իքմինքն էլ Բարխանի տանքն այ եղել, տարել ան»։ Այս վավերագիրը գրվել է «Քարայգլխի նոր շինած դալումն»[10]։

Վերը բերված վավերագրերում եղած «Մեծ» և «Պզտիկ» սղնախներ անվանումներն էլ տեղիք են ավել վերոհիշյալ վիճաբանությանը. հետազոտողներին թվացել է, թե Իվան Կարապետի հիշատակած այս անվանումները վերաբերում են Լեոյի նշած սղնախներին։ Բայց իրողությունը բոլորովին այլ է։ Բանն այն է, որ ռուսական պատվիրակի հիշատակած «Մեծ» և «Պզտիկ» (փոքր) անվանումները Ավան յուզբաշու գլխավորած սղնախի տարբեր հենակետերին, այսինքն Ղարաբաղի տարածքում եղած բազմաթիվ սղնախներից միայն մեկի բաղկացուցիչ մասերին է վերաբերում։ Այդ սկզբունքով էին կառուցված բոլոր սղնախները։ Այսինքն, յուրաքանչյուր մելիքություն ուներ իր հիմնական կամ «Մեծ» սղնախը, որը տվյալ ռազմաքաղաքական օջախի կենտրոնն էր և այնտեղ էր գտնվում տվյալ շրջանի ավագանին։ Դրան զուգահեռ, որպես հիմնական սղնախի ենթակա կամ բաղկացուցիչ հենակետեր, տվյալ մելիքության տարածքում կառուցված էին նաև այլ ամրություններ՝ հիմնականի համեմատությամբ «փոքր» սղնախներ, որոնք վտանգի պահին ապաստան էին հանդիսանում տվյալ մելիքության տարածքի մյուս բնակավայրերի բնակչության համար։

Տվյալ պարագայում Ավանի և Թարխանի զլխավորած հիմնական սղնախը Շոշն էր (Ներկայիս Մղնախ գյուղի տարածքում), բայց նրանց իշխանության տարածքում կար նաև մի փոքրիկ, հենց իր՝ Ավան յուզբաշու, անունը կրող[11] այլ ամրություն։ Եվ ահա, ռուսական պատվիրակի զեկուցագրում նշված այդ «Մեծը» և «Փոքրը» վերաբերում են հենց նույն սղնախի տարբեր հենակետերին, քանի որ իր աուաքելության սկզբնական շրջանում, այսինքն, մինչև առաջին զեկուցագիրը գրելը նա բացի Ավանի իշխանության տակ եղած ամրություններից, ուրիշ այլ սղնախներում չի եղել։ Որ դա այդպես է, երևում է հետևյալից։ Բանն այն է, որ Իվան Կարապետը Բաքվից սղնախներ էր ուղևորվել Շոշից ռուսական իշխանությունների մոտ ուղարկված պատվիրակներ Անտոն քահանայի և Քրիստափորի ուղեկցությամբ[12]։ Այս պատվիրակները 1723 թ. դեկտեմբերին Բաքվի ռուսական ռազմական իշխանություններին էին տարել Շոշի զեկավարների և Ծսայի կաթողիկոսի՝ նոյեմբերի 1-ին գրած օգնության աղերսագիրը[13] և բնական է, որ նա պետք է բերեին նրա պատասխանը։ Ահա այդ պատվիրակներն էլ իրենց հետդարձի ուղերթին միացած Իվան Կարապետին Գանձասար կարող էին տանել միայն Դիզակի և Խաչենի մելիքությունների տարածքով, քանի որ այդ ժամանակամիջոցում Ղարաբաղի ռազմաքաղաքական շրջաններում տակտիկական տարաձայնություններ կային։ Այսպիսի իրավիճակի գոյության պայմաններում էլ ռուսական զինական օգնությամբ ազատագրվելու կողմնակիցներն այլ կերպ վարվել չէին կարող։ Գանձասարի կաթողիկոսն ու Շոշի զեկավարները ստիպված էին քաղաքական այդ կուրսը ժամանակից շուտ չբացահայտելու նպատակով խիստ գաղտնի պահել այդ առթիվ կատարվող գրագրություններն ու բանակցությունները։ Եվ բնական է, որ Բաքվի ռուսական իշխանությունների ու հենց նաև ցարական արքունիքի հետ բանակցությունների համար էլ նրանք պետք է ընտրեին առավել տպահով դեսպանական ճանապարհ, որն անցներ Խաչենի և Ավան յուզբաշուն ենթակա տարածքների վրայով։ Այնպես, որ Գանձասարից քաղաքական առաքելությամբ Բաքու գործուղված պատվիրակությունը պետք է այդտեղից անցներ Շոշ ու նրշված տարածքով շարժվեր հարավ, շրջանցեր Վարանդայի մելիքությունն ու թեքվեր արևելք։ Հետդարձի ճանապարհն էլ նույնն էր և հենց այդ ճանապարհով էլ Շոշ էր բերվել ռուսական պատվիրակը։ Շոշի և Գանձասարի պատվիրակների հենց այս հետդարձի ընթացքում էլ նրանց միացած ռուսական պատվիրակը Ղարաբաղ մտնելուց հետո Շոշ կարող էր գնալ միայն Ավանի ենթակայության տակ գտնվող տարածքով, և մինչև Շոշ հասնելը եթե հանդիպեր որևէ ամրու-

---

10 Քարագլխի սղնախը կառուցվել է Շոշի վրա վերոհիշյալ հարձակումից հետո։ Այն գտնվում է Խաչենի մելիքության տարածքում։ Բացի Իվան Կարապետից այս սղնախում էր հաստատվել նաև Թարխան յուզբաշին։ Այս սղնախում էլ ընթանում է նրանց հետագա գործունեությունը, ընդհուպ մինչև Ռուսաստան տեղափոխվելը։

11 Մ. Բարխուտարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 83։

12 Г. А. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898. док. № 252.

13 Նույն տեղում, վավ. № 232։

թյան, ապա այն ևս պետք է ենթարկվեր Ավանին։ Իսկ Գանձասար գնալու համար նա այդ տարածքով պետք է շարժվեր հյուսիս-արևմուտք, դեպ Շոշ, այդտեղից թեքվեր հյուսիս ու անցներ Խաչենի մելիքությունն, որտեղ գտնվում էր Գանձասարը։ Հենց այս ուղերթն է նա նկարագրել փետրվարի 2-ին գրած իր վերոհիշյալ զեկուցագրում։ Այս տարածքով անցնելիս Իվան Կարապետը սկզբում եղել է մի փոքրիկ ամրությունում (թերևս դագար են առել այդտեղ), իսկ հետո ուղերթը շարունակելով հասել է ավելի խոշոր ամրություն (Շոշ), այստեղ հրապարակել ռուսական կայսրի հրովարտակը և այդ սղնախի ղեկավարների ուղեկցությամբ անցել Գանձասար։ Գանձասարում ևս նա հրապարակել է հրովարտակը և այդ կապակցությամբ կատարված արարողությունից հետո նորից հետ վերադարձել Շոշ և փետրվարի 2-ին այդտեղ էլ գրել վերոհիշյալ զեկուցագիրը[14]։ Այնպես, որ Ղարաբաղ գալու օրվանից, գոնե, մինչև փետրվարի 2-ը Իվան Կարապետը գտնվել է Ավանի ռազմաքաղաքական միավորումում՝ Շոշում։ Նա ուրիշ սղնախում չէր եղել և չէր էլ կարող լինել, քանի որ Շոշի ղեկավարները նրան չէին թողնում հեռանալ իրենցից. «...ասում ան, թե եայ մեր քշտին կացիր մինչև թագավորն գայ, եայ թագավորին ուքագն մեղ տուր, մեք քեզ խէտ մարթ դնենք, տանի Քուռն յանցկացնի»[15]։

Կարծում ենք, այսքանը համոզիչ է դարձնում, որ նրա նշած «Մեծ» և «Պղտիկ» սղնախները վերաբերում են Ավանին ենթակա ամրություններին և «Մեծ» սղնախ էլ նա անվանել է հենց Շոշը, որտեղ հաստատվել է և ինքը։ Այդ մասին կա հավաստի հետևյալ վկայությունը։ Հուլիսին գրված զեկուցագրի վերը մեջբերված հաղորդումից երևում է, որ Ղափան գնալու կապակցությամբ Ավանի և պատվիրակի բացակայության ժամանակ Գյուլիստանի սղնախի յուզբաշիները հարձակում են գործել Մեծ սղնախի վրա ու գերել Թարխան յուզբաշուն։ Կասկած չի հարուցում, որ այստեղ «Մեծ սղնախ» ասվան տակ խոսքը Շոշի մասին է, քանի որ Ավանը և Թարխանը հենց Շոշի ղեկավարներն էին։

Ուրեմն, եթե փետրվարին պատվիրակ Իվան Կարապետը հաստատվել էր Ավանի և նրա եղբայր Թարխանի գլխավորած Շոշ սղնախում և վերջիններս չէին թողնում, որպեսզի նա իրենցից հեռանա, ապա ապրիլին, նույն յուզբաշիների գլխավորած սղնախի վրա կատարված հարձակման ժամանակ, Թարխանի տնից պատվիրակի իրերի բռնագրավումը կարող էր կատարվել Շոշ սղնախում։ Եվ օրինաչափ է նաև այն, որ Ղափան ձեռնարկած զորաշարժի, այսինքն՝ Ավանի բացակայության ընթացքում, Շոշի պաշտպանությունը գլխավորեր նրա եղբայրը՝ Թարխան յուզբաշին, որին «բռնել ան» դարձյալ վերոհիշյալ հարձակման ժամանակ, բռնագրավելով նաև այդտեղ հաստատված մյուս «շիրվանբցոնց» ունեցվածքը։ Այսինքն, ստույգ պիտի համարել, որ պատվիրակի հաղորդած վերոհիշյալ «Մեծ սղնախը» իրոք վերաբերում է Շոշին[16], որի գլխավորներն էին Ավանը և Թարխանը։

Իսկ ո՞րն է «Պղտիկ» («փոքր») սղնախը, որը ռուսական պատվիրակը տեսել է Բարվից Շոշ գալու ճանապարհին, դարձյալ Ավանին ենթակա տարածքում։ Մ. Բարխուտարյանցն իր «Արցախ» աշխատության մեջ, նկարագրելով Դիզակի բերդերը, նշում է նաև Վենսա Ղալան[17], որը գտնվում է Հադրութի հյուսիսային կողմի լեռնաճյուղի հյուսիսահայաց լանջին, Հավքիրա-

---

14 Զեկուցագրի վրա մակագրված է. «Письмо армянина Карапета из урочища Шош от 2 февраля 1724 г.».

15 «Армяно-русские отношения в первой трети XVIII века», т. II, ч. II, Ереван, 1967, док. № 210.

16 Այս իրողությունը հաստատել են նաև նորագույն հետազոտողները։ Բայց այս «Մեծը» նրանք դիտել են ոչ թե որպես մի ռազմաքաղաքական միավորի բաղկացուցիչ, համեմատաբար ավելի մեծ մաս, այլ համաղարաբաղյան մասշտաբով գլխավոր զորակայան, ձգտելով լեռային ուղղել այն հարցում, որ Ղարաբաղի ռազմական ուժերի հիմնական կենտրոնը («Մեծ սղնախը») ոչ թե գտնվում էր Մռավ լեռան փեշերին, այլ հենց Շոշն էր։ Մենք արդեն տեսանք, որ ակադ. Ա. Հովհաննիսյանը հենց այս բովանդակությամբ էլ ընդունելով այս սղնախի անվանումը, հակված էր Գյուլիստանի և Ջրաբերդի սղնախները համարելու «փոքրը»։ Նա այդպես էլ գրում է. «Այս գրությունից (խոսքը ռուսական պատվիրակի հուլիսին գրած զեկուցագրի մասին է— Հ. Ա.) պարզվում է, որ գրության մեջ հիշատակված Ջրաբերդի և Գյուլիստանի զորապետների սղնախները անմիջապես կարող էին մտնել միայն փոքր սղնախի սահմանների մեջ» (նշվ. աշխ., էջ XL)։ Ուրեմն նա Լեռի առաջադրած սղնախների տեղերն է փոխում միայն։ Այս մասին տե՛ս նաև Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 33, П. Т. Арутюнян, նշվ. աշխ., էջ 226։

17 Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 83։

Բաղ բնակավայրի շրջակայքում։ Մ. Բարխուտարյանցը նաև ուղղակի նշում է, որ «Բերդս կոչվում է և Ավանիզրաշու բերդ»[18]։ Ավանի անվան հետ կապված բերդի և նույնանուն սարի գոյության փաստը կարիք չի զգում այլ վավերագրերի հաստատման։ Եթե դա այդպես է, ապա ստացվում է, որ Ավանի անվան և գործունեության հետ կապված ունենում ենք իրարից ոչ այնքան մեծ հեռավորության վրա գտնվող ռազմական երկու հենակետեր, մեկը, արդեն վերը հիշատակված Շոշը, որն Իվան Կարապետն անվանում է «Մեծ սղնախ» և երկրորդը՝ հենց իր, Ավանի անունը կրող այս դալա-ամրությունը։ Ամենայն հավանականությամբ ռուսական պատվիրակն իր դարաբաղյան ուղեգնացության հենց սկզբից էլ առաջինն այստեղ է այցելել, այստեղից անցել Շոշ (Մեծ սղնախ), որտեղից էլ ճանապարհը շարունակել է դեպի Գանձասար, քանի որ դա մի գծի վրա է։

Ռուսական պատվիրակն իր առաքելության հենց սկզբում լինելով միայն Ավան յուզբաշու գլխավորած երկու ամրություններում, բնական է, որ առաջին զեկուցագրում իր այցելած հենակետերի մասին խոսելիս, կամ դրանք տարբերելու համար պետք է ելներ միայն նրանց չափերից, այսինքն նշեր, որ ինքը սկզբում եղել է Փոքր սղնախում, այդտեղից անցել է չափերով ավելի մեծ սղնախը և այլն։ Դրանում դժվար չէ համոզվել, եթե առանձին-առանձին ներկայացնենք ու համեմատենք այս երկու ամրությունները։

Նախ, ասենք, որ Շոշ սղնախը, կամ վերոհիշյալ մեծ սղնախը չի կարելի նույնացնել բուն Շոշ գյուղի հետ։ Շոշը այն գյուղն է, որտեղ հիմնավորվել էին «շիրվանցիները»՝ Ավանի և Թարխանի գլխավորությամբ։ Սրանք էլ ընտրել են Շոշից մի քանի կիլոմետր հարավում գտնվող մի անառիկ տեղանք և ամրացրել այն։ Դա էլ կոչվել է Շոշի սղնախ և առ այսօր էլ գոյատևում է որպես Սղնախ անունով գյուղ, իսկ քննվող ժամանակաշրջանում ժայռակերպ տեղանքի պատճառով կոչվել է նաև Քար։ Ինքը՝ Շոշ գյուղը, սղնախ լինելու ոչ մի հարմարություն չունի և գտնվում է ստրատեգիական անբարենպաստ դիրքում, մինչդեռ այդ սղնախը շրջապատի վրա իշխող բնականից դժվարամատչելի մի վայր էր, որտեղ վտանգի դեպքում քաշվում էին Շոշի բնակիչները՝ անասուններով, ունեցվածքով և «խիզանով»։ Այն բաղկացած էր երկու մասից, ստորին՝ այդ սարահարթի, նույնպես դժվարամատչելի ստորոտում եղած ամրությունից (որը հիմնական բնակավայրն էր) և վերինից, որն առավել անմատչելի էր և որից օգտվում էին ծայրահեղ դեպքերում։ Բերենք այդ սղնախի հետ կապված ռազմական մի միջադեպի նկարագրություն՝ արված Իվան Կարապետի կողմից, 1726 թ. աշնանը։ «Դարցեալ մալում լինի վերոյ գրեալ սահապիս զուլուղումն, որ... բարդոյ Սարո Մուստայֆայ փաշեն... և Հաջի Դավութ, ուր ախպէրն, ուր զօշումօվն եկին Ավան ուզբաշուն սղնախին վերէն Դ (4) օրն կռիվ տվին։ Դ (4) օրնէն յետ Ավան ուզբաշին ուր սէղնաղինց դուրս եկավ, եկավ իմ սէղնաղին, որ է Թարխան և Բաղին և Սարդիս ուզբաշուն սէղնաղ էր։ Ավան ուզբաշու դուրս գալէն յետ, Օհան և Սիմոն ուզբաշուն խետ Դ (4) օր էլ կռվի տվին, որ է դառցավ Ը (8) օրն, մինչի սէղնաղին կէսն առին, խիռան ոխչ բալորեցին վերին սէղնաղ։ Ներքին սաղնաղին որչանք որ ձի և տավար կէր, տարան»[19]։

Բերված հատվածից երևում է, որ Շոշի սղնախը, իրոք, բաղկացած էր երկու՝ մեկը մյուսի շարունակությունը կազմող մասերից։ Նրա ներքին մասը պաշտպանական տեսակետից ավելի խոցելի էր։ Այդ պատճառով էլ պաշտպանները ստիպված են եղել ներքին մասում թողնել ամբողջ գույքը և անասունները, ինչը և բռնագրավել ու տարել են թուրքերը վերին սղնախի համար տված չորսօրյա ճակատամարտից հետո։ Ուրեմն, ինչպես երևում է Շոշի սղնախը (Մեծ սղնախը) կրկնակի պաշտպանական դոտիներ ունեցող սիստեմ էր, որը վտանգի դեպքում ապաստան էր ծառայում ոչ միայն մարդկանց, այլ նաև գույքի և մեծաքանակ անասունների համար։ Այսինքն դա հզոր ամրություն էր։

Իսկ ինչպիսի՞ հնարավորություններով էր օժտված Փոքր սղնախը՝ Վենսա զալան։ Այս ամրության կառուցվածքի մասին Մ. Բարխուտարյանցի վերոհիշյալ գրքում տրված է հետևյալ նկարագրությունը. «Ամրոցս ունի քարակերտ շրջապարիսպ, որ բոլորված է գագաթի դիրքի ձևով, երկու բարձր և ամուր բուրգ և մի դուռն... Պարսպի ամենաբարձր մասն երկու աշտարակների կողմն է։ Հարթ և հավասար է ամրոցիս մակերևույթն, որ համարյա թե հարյուր քառակուսի մետր է... ամրոցիս հատակն լի է բնակարանների քարակերտ բակերով, իսկ վերնամասում շինված է իբրև միջնաբերդ մի փոքրիկ դղյակ, որի մեջ է քարակերտ շինված մի ընդար-

---

18 Նույն տեղում։

19 Ա. Գ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն, նշվ. աշխ., վավ. № 76, 79։

ձուն ջրավաղան, որի մեջ տակավին կա ջուր, բայց անմաքուր»[20]։ Ինչպես տեսնում ենք, Շոշի սղնախի ռազմատակտիկական հնարավորությունները և հզորությունը Վնեսա ղալա ամրության համեմատությամբ ավելին էին. երկու մասից բաղկացած և փաստորեն երկու սղնախի հնարավորություններ ունեցող Շոշի սղնախը կարող էր պատսպարել հազարավոր անասուններ, հարևան գյուղերի բնակիչներին և այլն, իսկ Վնեսա ղալան իր հարյուր քառակուսի մետր տարածքով կարող էր պատսպարել անհամեմատ քիչ թվով մարդկանց։ Ռուսաստանից նոր ժամանած պատվիրակը առաջին անգամ լինելով այս ամրություններում, բնական է, որ դրանք իրարից տարբերելու համար Շոշի սղնախը պիտի անվաներ Մեծ, իսկ Վնեսա ղալան՝ Փոքր։ Այնպես, որ վերոհիշյալ վավերագրային հիշատակումների պատմագիտական արժեքը սահմանափակվում է միայն նրանով, որ գաղափար է տալիս Ղարաբաղում եղած 6 ռազմաքաղաքական միավորներից միայն մեկի՝ Ավանի յուզբաշու գլխավորած միավորի կառուցվածքի մասին։ Այսինքն, նրանից իմանում ենք, որ այն բաղկացած էր երկու՝ մեծ և փոքր հենակետերից։

Այսպիսով ստացվում է, որ ռուսական պատվիրակի վերոհիշյալ տեղեկությունները չեն կարող հիմք ծառայել հետազոտողների վերը հիշատակված կարծիքների համար։ Պատվիրակի նշած «Մեծ» սղնախը, ինչպես տեսանք, Ավանի և Թարխանի ղեկավարած սղնախի կազմում եղած երկու ռազմական հենակետերից իր հզորությամբ առավել մեծին է վերաբերում միայն։ Ղարաբաղի տարածքում իրենց հզորությամբ այդպիսի «Մեծ» սղնախներ էին նաև «Քարագլուխը», Գյուլիստանը, Ջրաբերդը, Տողը, Կոշիզ-Ավետարանոցը և այլն, և սրանցից ոմանք ավելի հզոր էին, քան Շոշի սղնախը։ Այնպես, որ հիմք ընդունելով Իվան Կարապետի զեկուցագրում տեղ գտած «Մեծ» սղնախ» անվանումը, չի կարելի Շոշը համարել Ղարաբաղի ռազմական ուժերի գլխավոր կամ հիմնական կենտրոնը, իսկ «Փոքրի» տակ չափերով ավելի փոքր կենտրոնը և նույնիսկ Գյուլիստանն ու Ջրաբերդը ներառնել վերջինիս կազմում և այն հակոտնյա վիճակի մեջ դնել «Մեծի» հետ։ Սա բացահայտ թյուրիմացություն է, որովհետև իմաստ չունի սովորական սղնախներին Իվ-ան Կարապետի տված անվանումների մեջ որոնել ռազմաքաղաքական հզորությամբ համաղարաբաղյան մասշտաբի չափանիշներ։ Նման փորձը կարող է թողնել այն տպավորությունը, թե ազատագրական պայքարի ժամանակաշրջանում, իբրև, Ղարաբաղի ուժերը կենտրոնացած են եղել միայն այս երկու խոշոր հենակետերում։ Դա միայն վիպերգական երանգ կհաղորդի այդ ժամանակաշրջանի պատմությանը, ստվերի տակ կթողնի հինգ մելիքություններում ստեղծված վեց սղնախների ուժերով իրականացված առավել մասսայական ու ծավալուն պայքարի իրական պատկերը։ Ազատագրական պայքարի ուժերը կազմակերպված էին ըստ մելիքությունների և յուրաքանչյուր մելիքություն առանձին ռազմաքաղաքական միավոր էր՝ իր համապատասխան կենտրոնով։ Վտանգի, այսինքն թշնամու հարձակման դեպքում այստեղ էր պատսպարվում տվյալ մելիքության ավագանին, իհարկե, ունեցվածքով և անասուններով, ինչպես նաև մոտակա գյուղերի բնակչությունը։ Իսկ ինչ մնում է մելիքության ավելի հեռավոր գյուղերի բնակչությանը, ապա, բնական է, որ նրանք վտանգի դեպքում չէին կարող օգտվել հիմնական այս սղնախից և ըստ բնական հարմարությունների իրենց համար ևս կառուցում էին նման ամրացված հենակետեր, որոնք չափերով ավելի փոքր էին լինում, քան հիմնականը։

Ինչ խոսք, որ դիմադրության կազմակերպման գործում հիմնական դերը կատարում էր կենտրոնական կամ մեծ սղնախը, որտեղ յուրաքանչյուր մելիքության ավագանուց բացի կենտրոնացված էր լինում նաև զինական ուժի մեծ մասը։ Եթե մելիքության հիմնական կամ կենտրոնական սղնախը մեկն էր, ապա փոքր սղնախների քանակը տարբեր մելիքություններում տարբեր էր՝ կապված տեղանքի պաշտպանական հնարավորությունների հետ։

Այսպիսին էր սղնախների ռազմաքաղաքական կառուցվածքը Ղարաբաղի մելիքություններում։ Օրինակ, Խաչենի մելիքությունում հիմնական կամ մեծ սղնախն էր Քարագլուխ բնակավայրն իր շրջակա, ավելի քան 250 հա, գրեթե անառիկ տարածքով. բացի սրանից փոքր սղնախներ կային նաև Խնձրիստան գյուղի արևմտյան մասում, Գանձասար վանքի շրջակայքում, Կոշաղակաբերդի, Խոխանաբերդի շրջաններում և այլն։ Ջրաբերդի մելիքության գլխավոր սղնախն էր Ջրաբերդը, բայց որպես սղնախ հիշատակվում է նաև Քաղաքատեղի վայրը։ Ավանի գլխավորած ռազմաքաղաքական միավորի գլխավոր սղնախն էր Շոշը, բայց ինչպես տեսանք կար նաև փոքրիկ սղնախ՝ Ավանա բերդը և այլն։

Հասկանալի է, որ յուրաքանչյուր մելիքության ռազմաքաղաքական հնարավորություններն

---

20 Մ. Բարխուտարյանց, Արցախ, էջ 83։

ի սպաս էին դրված տվյալ մելիքության պաշտպանության նպատակներին։ Անհրաժեշտության դեպքում, իհարկե, մի մելիքության ուժերի մի մասը օգնության էր գնում հարևան մելիքության սղնախներին, բայց ասել, որ այդ ժամանակաշրջանում ստեղծվել էին համազարարաղյան մասշտաբի զորակայաններ (ներկա պարագայում երկու), որտեղ և տեղակայված էր զորքերի հիմնական մասը, ճիշտ չէր լինի։ Նախ, այն պատճառով, որ լեռնային տեղանքն ինքնին բացառում էր մի տեղում մեծաքանակ զորքերի կուտակումը, քանի որ տեղանքի պատճառով բացակայում էր նաև նման զորամիավորումների մասշտաբային գործողությունների հնարավորությունը։ Թշնամու հարձակման դեպքում լեռնոտ տեղանքի պաշտպանների համար ամենից արդյունավետ պայքարի ձևերն էին հաշող պաշտպանությունը և հմուտ թեևնցումները, որոնց համար պարտադիր չէ մեծաքանակ ուժերի կուտակումները։ Այսպիսի կուտակումները թեև ավելի շուտ վնասակար կլինեին, քան օգտակար։

Մյուս կողմից, սակավամիջոց լեռնականների համար տնտեսական տեսակետից ձեռնտու չէր արտադրաուժ հանդիսացող տղամարդկանց մեծ մասսաներ կենտրոնացնել առանձին զորանոցներում՝ որպես գործող բանակ։ Այդպիսի դեպքում ո՞վ կզբաղվեր տնտեսությամբ, ինչ միջոցներով, կամ ո՞ւմ հաշվին պետք է պահվեր այդ բանակը։ Լեռնականների կենսամիջոցները հնարավորություն էին տալիս կենտրոնական, կամ մեծ սղնախում պահել միայն ստհմանափակ քանակով մշտական զորք, իսկ ռազմունակ բնակչության մեծ մասը չնայած զինված էր, բայց զբաղվում էր տնտեսությամբ։

Կար նաև մի այլ հանգամանք։ Չպետք է մոռանալ, որ միասնական զորամիավորումների մասին խոսելուց առաջ պետք է հիշել, որ ազատագրական պայքարը տարվում էր ավատական մասնատվածության պայմաններում։ Դա համընդհանուր երևույթ էր ոչ միայն հայ իրականության, այլ նաև Անդրկովկասի մասշտաբով։ Այսպիսի մասնատվածության և հաճախ նաև ավատատիրական հողի վրա եղած ներհակությունների պայմաններում ի՞նչ խոսք կարող էր լինել միասնական զորամիավորումների մասին, ո՞վ պիտի լիներ հրամանատարը, ինչ սկզբունքով պետք է իրականացվեին ռազմատնտեսական մատակարարումները, հանգերձավորումը և այլն։ Այս հանգամանքները բացառում են նման միասնական զորամիավորումների ստեղծման հնարավորությունը, իսկ պատմագիտության մեջ եղած վերոհիշյալ կարծիքներն էլ հիմնազուրկ են։

Қ ВОПРОСУ О «БОЛЬШИХ» И «МАЛЫХ» СГНАХАХ

ЗАВЕН АРЗУМАНЯН

Резюме

Вопрос о существовании «больших» и «малых» сгнахов в Карабахе как основных центров освободительной борьбы армян в 20—30-х гг. XVIII в. является недоразумением, возникшим в результате употребления наименования «Мец Когманк» в сокращенном виде и сравнения названий двух укреплений, находящихся в составе военно-политической единицы во главе с Аван Юзбаши. Анализ письменных источников показывает, что центры военно-политических единиц освободительной борьбы создавались и действовали в каждом меликстве и поэтому границы этой борьбы гораздо шире предполагаемых.